

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆ

Գ Ը Ն 2 Ը Կ

Գտնման նահանգական և գաւառական քաղաքը ձգւում է Հիւսիսային լայնութեան 40°41' և արևելեան երկարութեան 64°W առաինանների տակ, 1449 ստնաչափ բարձրութիւն ունեցող Հարթութեան վրայ և բռնում է 114,76 ք. վերստ կամ 130,60 ք. կիրմետր տարածութիւն: Քաղաքի միջով անցնում է Համանուն գետը, բաժանելով նրան երկու նշանաւոր՝ Հայոց և թուրքաց մասերի: Հայոց մասը, որ ընկնում է գետի աջ կողմը, բաժանում է Քիլիսաքեանդ և Մալաշալլու թաղերի: Ե.ա.աջնում բնակւում են զլխատորապէս Հայեր, իսկ երկրորդում՝ թուրքեր: Թուրքաց մասը, գետի ձախ կողմը, բաժանում է Երևանցոց, թուրքերի, Բաղրանչիլար և Նորաշէն թաղերի: Երևանցոց թաղում գտնւում է ս. Գեորգ եկեղեցին, քաղաքային ժողովարանը, Յիրալովի առաջնակարգ, գեղեցիկ և այլ Հիւրանոցներ, ամենալաւ խանութները և այլն: Թուրքերի թաղում ընդարձակ Հրապարակը, մզկիթը և այլն: Բաղրանչիլար թաղը ձգւում է Թուրքաց թաղից գեղի արևմուտք և կորչում այգիների (բաղերի) մէջ: Սրա բնակիչները մեծ մասամբ թուրքեր են: Նորաշէն թաղը գտնւում է մեծ Հրապարակից գեղի արևմտահիսիս՝ մաս մի վերստ Հե.ա.ա.արևմտեան վրայ, Թուրքաց թաղի յետևը: Այստեղ կան ս. Աստուածածնի եկեղեցին և ս. Սարգսի ուխտատեղին:

Եթէ Համեմատելու լինինք Հայոց և թուրքաց մասերը, կը տեսնենք, որ թուրքաց մասը բռնում է ամենալաւ, Հարթ տարածութիւնը, այն ինչ Հայոցը աւելի բարձր և Համեմատարար աւելի վատ տեղը, բայց փողոցները, շինութիւններն և

մաքութիւնը ի նկատի առնելով, Հայոց մասը աւելի բարձր է:

Արևանցոց և Քիլիսացեանց թաղերում փողոցները կանոնաւոր և լայն են, մինչդեռ միւս թաղերում, ընդհանրապէս ոչ, թէև այտոնց էլ կան միջանի կանոնաւոր փողոցներ:

Գանձակի զարդը մեծ Հրապարակն է, որ տարածւում է թրքաց թաղում, գլխաւոր մզկիթի առջև. ու մօտ 150 ս. երկարութիւն և 40 սստէն լայնութիւն ունի. բարձր, Հարիւրամեայ շինարի ծառերը շարուած են շորս բոլորից, քառակազրիւրը խոխոջում է մէջ տեղում, բազմաթիւ խանութները եղերում են նրան, իսկ ահագին քանակութեամբ Հազար ու մի տեսակ մրգերն ու ալլ և ալլ ուտելիքէնները, որ անկարգ ու անկանոն կերպով ածուած, զիզուած են այս ու այնտեղ, շինարեմենների ստուերի տակ, նրան մի արտակարգ գեղեցկութիւն են պարգևում: Ախոս, որ այժմ, զանազան փայտեայ խանութներ շինելով, փոքրացնում և տղեղացնում են այն Հրապարակը, որ հնումը և միարշաւների համար իբր սաղարէզ է ծառայել (տես 304—305):

Գանձակի երկրորդ սքանչելիքը փողոցների երկու կողմից բարձրացոց, ահագին, Հարիւրամեայ շինարիները և որանց մօտով—փողոցների երկու կողմից—բլքբլայով հոտոց ջրերն են: Այս շինարիները չափազանց բարձր և հաստ են. մինչև անգամ որանցից մինի փռւն կռնդի մէջ մի կօշկակարի խանութ էր սարքուած: Ախոս որ միաքաշի գիծն անցկացնելիս ստիպուած եղան կտրելու այս շինարին:

Նայն բարձրուղէշ, Հարիւրամեայ շինարիներն են, որ զարդարում են առաջները՝ խանի, իսկ այժմ՝ Հասարակաց այգին, որ գեղեցիկ զրօտավայր է:

Չինութիւններն ընդհանրապէս աղիւսից են, որովհետև քաղաքի մօտերքում քարհանք չկայ: Տներից նորերը կանոնաւոր, բաւական գեղեցիկ, յարմար և բարձր են, իսկ հները, ինչպէս և թուրքերինը, անկանոն, ցածր և տղեղ:

Հասարակական շինութիւններից ամենից հինը թուրքաց գլխաւոր մզկիթն է, որ նշանաւոր է նաև ճարտարապետական տեսակէտից: Սա շինուած է Զահ-Աբաս Ա. Ժամանակ և զբ-

տրնում է Հրապարակի Հարաւային Ժայռում. շրջադասում է պարագոյ, որի գլխաւոր դռան երկու կողմում բարձրանում են երկու մենայրեններ. գաւթում կայ ջրի շատրուան: Արանդ է նաև թուրքաց տղայոց զոյրոցը:

Քացի սրանից կայ նաև ուրիշ երկու մղկիթ, որ Հարաւ-րապետական կամ Հնարկետական տնակէտից մի առանձին նշանակութիւն չունին:

Քաւ-Արատի մղկիթից յետոյ ամենաւին շէնքը Հայոց ս. Յովհաննէս-Մկրտչի մայր եկեղեցին է, որ գտնուում է Քի-լիսաքեանց թաղում: Սա վեց Հասարակ սիւների վրայ Հաստա-տում միջակ բարձրութեան մի շէնք է, որի առաջ շինուած է մի գաւիթ, փոքրիկ կաթուղիկէով, որտեղից գանգակներ են քաշ արած:

Եկեղեցւոս շինութեան թուականը գտնուում է Հարա-ւային պատում, արևի ժամացոյցի տակ եզամ Հետևալ ար-ձանագրութեան մէջ.

Դ ժամանակն Ովանես կաթուղիկոսի բլին ՅՁԹ (1633)
ամի շինեցաւ սուրբ Ովանես եկեղեցին:

Գաւթի շինութեան մասին էլ կայ արձանագրութիւն արևմտեան դռան վրայ.

Հիմնեցաւ ի ճիմանե գաւիթ սուրբ Յովնանես եկեղեցոյս
ի հայրապետութեան սեանն երեւնայ եւ առաջնորդութեան
Ներսէս արքայան արեւոյսկապոսի արդեամբ եւ ծախիւմ Ման-
սեպի Տէր Գեորգի Տէր Յովնաննիսեան, հայցեմ առ սրեղի եղ-
բարցց ում հանդիպիք ընթեռնայ՝ զմեկ բերան զզոյրմի խնդ-
րեցիք առ Աստուած 1816 ամի:

Իսկ կաթուղիկէի մասին արձանագրութիւն կայ ըուն
ստանալի արևմտեան դռան Հարաւային կողմում.

Ի բլին Հայոց ՅՁԹԱ. շնորհիւն Աստուծոյ եւ Մանեսի
Աղաջան Խաչատուրեան իմոյ սեպական արդեամբ կառուցի
նորաւն կաթուղիկս սուրբ Յովնանես եկեղեցոյս ի յիսասակ
հոգւոյ իմոյ եւ ամենայն ննչեցելոց եւ կենդանեաց իմոց, Աղա-
ջեմ զհանդիպողոց, յիշեսչիք զմեզ բարձանաւոր մաղրանն մեր,
զի միջնորդութեամբ սուրբ Աստուածածնիքն եւ ամենայն սր-
բոց զնչեսցի Տէր զձեռաղիր յանցանաց իմոց, յամի Տեառն
1862-ին, Գանձակ:

Ըստ եկեղեցին է եղել զանձակեցիների պանթէօնը և արտեղ, կամ որս բախումն են թաղուած Գանձակի գրեթէ բոլոր նշանաւոր մարդիկը, ինչպէս՝

Աղուանից սուրբ Կորէտս կաթուղիկուսը՝ Հարաւային խորանում, 1742 թուին:

Միլիք Հաթամի որդի Արէլը նոյն խորանում՝ 1776 թ.

Եղիշէ վարդապետը (1757), Զարաթիբոյցի Աթանաս վարդապետը (1764), սուրբ Արուստէմայ նուիրակ թոխաթցի Ֆարաւօն վարդապետը (1786), Մուսթ անապատի առաջնորդ Յարութիւն վարդապետը (1800), սուրբ Ատեփաննոս նախափայի միաբան Ատեփաննոս վարդապետը (1834), եկեղեցու գաւթում: Գայի-Մաւհրատս մականուած Աւագ վարդապետ Զարապետու (1796) և թիւլի-Արզուման ուղղաշին (1796) եկեղեցու բակում:

Ըստ եկեղեցում կայ 11 Հատ ձեռագիր աւետարան *) և Հինգ մատուցք, որոնցից նշանաւոր են Տեառնեզոր Յակովբոսի, Յովհաննէս Կարապետի, Պանոսայիւն բժշկի և ս. Մինասի մատուցները, արմաթեայ խաչերի մէջ ամփոփուած:

Ըստ եկեղեցին բառական Հարաւոս է և բացի ուրիշ անշարժ կալուածներից, ունի նաև մի բազանիս:

Բացի այս եկեղեցուց, քաղաքումս կայ ուրիշ երեք եկեղեցիներ էլ, որոնցից ս. Լուսաւորչիներ աւելի նշանաւոր է ճարտարապետական տեսակէտից: Սա գտնուած է Քրիստաքենդի վերի մասում մի գեղեցիկ շրջապարիսպի մէջ: Զորս սիւների վրայ Հաստատուած մի Հոյակապ շէնք է սա, որի գմբէթը գեռ և ս չէ կառուցուած: Լուսամուտները նեղ և երկար են: Գուների առաջ կան փոքրիկ, գեղեցիկ գաւթիմներ: Եկեղեցու նրկարութիւնն է 30¹/₂ մետր, լայնութիւնը՝ 20 մետր: Արևելեան պատի վրայ արտաջուտ կայ Հեռեւեայ արձանագրութիւնը.

Չեղեի՛ւ և սգորձոքեանք Աստուծոյ հրմնեցաւ սուր տաճարս ի 14-ն սեպտեմբերի 1853 ամի և յն աւարտեցայն արժի բարեպառս մազմկոցոց Գանձակայ ի կայսրութեան ամենայն Ռուսաց Աղեփանդը Բ. և ի հայրապետութեան սեռան Գեղոց

*) Տես Ձեռագրիների բաժնում:

Ի սեպտեմբերի 1869 ամի ի արագան Մակար աբեղ պիսկոպոսն առաջնորդե Վրաստանի եւ Իմերեթի եւ անուանեցաւ Սուրբ Լուսաւորչի եկեղեցի յանուն արքայ Կոնստանտինի ճարտարանի ազգիս: Իմաստիկեցաւ սուրբ անուան յանուն արքայ Կոնստանտինի ի 1853 ամի եւ անուանեցաւ 1869 ամի:

Միւս երկու եկեղեցիները Հնգաշէն եւ Երեւանք են: Սուրբ Կէորղը գտնուում է գետի ձախ կողմում, Մեծ-Ջուկայի ճառ, միւսը, ս. Աստուածածինը՝ Կորաշէն թաղում: Այս երկու եկեղեցիներն իսկ Հիմնարկութիւնը վերադրուում է Արեւանից եւ նրա շրջակայքից գաղթած ժողովրդին, որոնք իրենց Հեռ բերել են նաև ս. Կէորղայ մատենքը, որ այժմ էլ պահուում է Համաձուան եկեղեցում:

Իսցի այս եկեղեցիներից քաղաքում կայ նաև ս. Աստուածածին, ս. Սարգիս եւ ս. Կիրակոս եւ Յուզիտա ուխտատեղիները, որ կիրակի եւ տոն օրերը բազմաթիւ ուխտաւորներ են Հաւաքում:

Ուսաներն էլ ունին մի բուսական Հայկապ, փոքրիկ եկեղեցի:

Միւս շինութիւններից նշանաւոր են նախնադպրոցի տունը, աղայոց գիմնազիան, Յիբայովի Հիւրանոցը, քաղաքային ժողովարանը, Հարց բարոյգարանը, արհեստաւորաց զբոսայգիքը եւ այլն:

Քաղաքին ջուր մատակարարում է պ. Պետրոս Կանաւանի Բիլիտաքենի թաղում եւ մի պարսկի մեծ Հրապարակում շինած աղբիւրները: Իսկ Կորաշէնի թաղը օգտուում է ջրհորի ջրից:

Քաղաքի միջով անցնում է միաքաշ երկաթուղի, սկսած Բիլիտաքեանից վերին մասից մինչև շոգեշարժ երկաթուղու կայարանը, որ գտնուում է քաղաքից զեւթ Հիւսիս, Յ վերստ Հեռաւորութեան վրայ:

Քաղաքը պատած է այգիներով, որոնց մէջ նշանաւոր է Իջիմաննապատեան աւազին այգին:

Քաղաքի շրջակայքի Հնութիւններից նշանաւոր է Հին քաղաքատեղում, այսինքն այնտեղ, որ գտնուում էր Կանձակը մինչև Չաւ-Որաս առաջինից աներուիլը, Թրքաց Դեօզ-Իմամ

ուխտանային, որ մի գմբէթաւոր մատուռ է, որի գմբէթի վրայ կանաչագոյն աղիւտով խաչաձև շինուածքներ կան: Հայկական ւաւնդութեան տակով, սա եղած է Հարց խարով նա-
Հատակի գերեզմանը, որ նախատակուել է՝ շխմենալով մաշ-
մեղականութիւն ընդունել: Իսկ պարսկական ւաւնդութիւնն
ասում է, թէ սա մաշմեղականութիւն ընդունելու Համար
քրիստոնեաներից է նախատակուել: Այս ուխտատեղու շուրջը
կան նախկին քաղաքի աւերակներ:

Գանձակի ընակիչները 1886 թ. աշխարհագրով եղած են
11,543 ար. 8751 իզ. ի միասին՝ 20294 Հոգի, որից՝ Հարե-
բը 4837 ար. 4077 իզ. ի միասին՝ 8914, Թուրքեր՝ 6524
ար. 4615 իզ. ի միասին՝ 11,139 Հոգի. ուսմանը՝ 100 ար.
31 իզ. ի միասին՝ 131 Հոգի. վրացիներ՝ 77 ար. 26 իզ.
ի միասին՝ 103 Հոգի. միւս ազգութիւններից 5 ար. 2 իզ.
ի միասին՝ 7 Հոգի: 1897 թ. միտեայ աշխարհագրով ²⁾
Գանձակում եղել են 18,238 ար. 14,852 իզ. ի միասին՝
33090 Հոգի:


Գանձակում, որպէս Համանուն նախանդական և գաւա-
ռական քաղաքում, ամփոփուած են բոլոր նախանդական և
գաւառական վարչական Հիմնարկութիւնները: Այստեղ է զբ-
աղնում և նոյն գաւառի Հոգևոր կառավարութիւնը, որ են-
թարկում է Արաստանի և Իմերէթի առաջնորդական թեմին:
Այժմ բաշորդ է արժ. Քաղբառ վարդապետ Գեորգ-Յուսէ-
լանը, որ բաւական մեծ Համակրութիւն է վարելում թէ Հայ
և թէ նոյն իսկ Թուրք ազգաբնակութեան կողմից ³⁾:

²⁾ 1897 թ. յունուարի 28-ին կառարած միտեայ աշխարհագրի մա-
տենները գնաւ ևս գտնուած են Պետերբուրգի գլխաւոր ստատիստիքական
գրասենեակում, իսկ որանց տեղաբնակները գտնուած է Գանձակի տարիանո-
սանքի: Աս այժմ իստիւն արգելուած է թոյլ սույ այս տեղաբնակներից
զգաստելու, որպէսզի զանազան սխալուելքների տեղիք չտրուին: Այ մի նա-
բաւարութիւն յանձնելով պատուելու այս աշխարհագրից, մեկը Գանձակի
գաւառի ստատիստիքական տեղեկութիւնների բաժինը կը տպագրենք, երբ
այդ մատենները կը վերադարձան Քիճիկի ստատիստիքական գրասե-
նեակին, երբ և թոյլ կը տրուի պատուել նրանցից:

³⁾ Պարզ էմ համարում իմ իտրին շնորհակալութիւնս յայտնել ինչ-
պէս արժ. Քաղբառ վարդապետին, նշնպէս և գաւառապետ ոչ Մարտիտին,
որ մեծապէս նպաստեցին ինձ գաւառում նախագործողիս:

Հանի-Ֆենդ գանուս է Գանձակից զէպի Հարաւ, 23 վերաս Հեւաւորութեամբ, ուր Սարեալ լեռնաշղթայի բազուկները բարձուն տարածուելով կազմում են միջանի փոքրիկ ձորակներ: Ամառանոցը տեղաւորուած է այս բազուկներից միին վրայ, անտառի մէջ և բաժանուած է երկու մասի, ներքին և վերին: Առաջնում բնակուած են առաւելագէտ աղքատ, իսկ վերինում՝ Հարուստ մարդիկ: Իւրաքանչիւրն էլ կրում է իւր բնակիչների բաղանիք գոյնը: Առաջնում գտնուած է կեղտոտ բազարը, փոքոցում վեր անած ձմերուկի և սեխի կոյտերով և սրանց կենդաներով: Այստեղ, մի Հաստարուն ծառի տակ ազատտանած աշխատում է մաշկակարը, երեկոները իւր գործիքները ծառի բնի մէջ փորուած պաշարանի մէջ գետնիցով: Նոյն ծառի միւս կայմն էլ առիական գործիչն է իւր փուքան ու ալը տարքի: Արա Հանգէղ առիական Հիւրանոց է, ուր դառուլ-գուանի և սագանդարի ձայնը երբէք չի բնդՀատուած, և որը կեղտոտութեան և վաշխաւորութեան մի կատարեալ բուն է. ամենաՀատարակ, իտՀանոցանման սենեակի սրափարձը երկու բուրլի է: Վերին մասում, մանաւանդ բազուկների թաղում, երևում են երկյարեանի, զեղեցիկ և բաւական նաշակով շինուած տներ, ընկարձակ պատշգամբներով, փոքրիկ պարտէզներով և շատրուաններով: Այստեղ կայ նաև կլուբ մի փոքրիկ զակլիւնով, երեք կանոնաւոր և բաւական լաւ Հիւրանոցներ: Մի փոքրիկ, քարաշէն, բաւական զեղեցիկ ռուսական եկեղեցի էլ շինուած է Հայկական մի աւերակ եկեղեցու տեղը, իսկ Հայկական եկեղեցի չկայ:

Բարեբազդարար Հասարակաց դրօսափայլ չկայ, ուր կանուէք սեղմուած կործաններով և սնդուրած երծով գրօսելին: Այստեղի գրօսատեղին անտառն է, ուր իւրաքանչիւր գերդաստան բոլորովին ազատ և ուրիշների բնկերակցութեան փոսնդից ազատ կարող է բոլորովին ննդլիժէ գրօսնել, երգել, խաղալ: Սառնորակ աղբիւրները, որ բզիւում են անտառի զանազան կողմերում, և փոքրիկ առուակը, որ կարկաչում է ձորակի մէջ, ամենալաւ գրօսալայրերն են կազմում քէֆ և թէլ սիրող սարուորների Համար, որանց քրքնջի և երգի ձայները



Taylor



H. Taylor

գալիս են ընդհատելու ծառերի քաղցր սոսափունք և թռչունների զայլալիկը:

Գիշերները, մինչդեռ բուն արիստոկրատ գասակարգը կուրքի կանաչ սեղանների առաջ կանի փոշի է կուլ տալիս, իսկ նրա փափկասուն կանաչը լոտո կամ կեկի է խաղում, երեսաստարգանների խմբերը անտառի զանազան կողմերում և ամառանոցի արևելեան ծալքի բարձրութեան վրայ, որտեղից երևում է Մուսան ու Քեոփասը՝ սրբերգներ են սարքում: Ամէն երեկոյ զինուորական երաժշտութեամբը անում է կուրքի բոտոնգում, բացի ուրբաթ օրերից, երբ իջնում է ներքին շինեցիներին էլ Հանոյք պատճառելու: Միայն կիրակի երեկոները տեղի են ունենում ևւրոպական պարեր, միւս երեկոները պարն արգելուած է, որովհետև պարոջ զոյգերը միմեանցով զրաւում կարող են զիպչել կանանչ սեղաններին և կամ բազմ փորձողների ուշքը զրաւել:

Լողաբաններ, բազանիս, Հանքային ջրեր չկան, բացի սելտերեան ջրի մի առաջանից, որ զտնւում է ամառանոցից փոքր ինչ Հեռու, Մուռութի ձտտ, բաց նրանից էլ չեն օգտում:

Արտեղ ամառանոց են գալիս ոչ միայն Գանձակի քաղաքացիները և կառավարչական աստանների ծառայողները, այլ և բազուցիներ: Իսկ ձմեռը բացի պահապաններից՝ ոչ ոք չի լինում: